

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«23» հունվարի 2014 թ. թիվ 58 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

 Ա. Սարգսյան



### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑՈՒՄ-ԳՆԱՀԱՏՄԱՆ

Երևան 2014 թ.

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԳԿՄԿ-ում ստացած կրթությունից գոհունակության վերաբերյալ շրջանավարտների հարցում-գնահատման (այսուհետ՝ շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է ԳԿՄԿ շրջանավարտների կողմից Գիտակրթական միջազգային կենտրոնում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:

1.2. Շրջանավարտների հարցումը ԳԿՄԿ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է:

1.3. Շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը:

## 2. Շրջանավարտների հարցման անցկացումը

2.1. Շրջանավարտների հարցումն իրականացվում է մագիստրատուրայի ավարտական ուսումնական տարվա վերջում:

2.2. Շրջանավարտների հարցումն իրականացվում է ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

2.3. Շրջանավարտները դիպլոմները ստանալիս Կրթության որակի ապահովման բաժնից ստանում են հարցաթերթը, լրացնում և հանձնում են Կրթության որակի ապահովման բաժին:

2.4. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը նշում է այն պատասխանը, որն առավել ճշգրիտ է արտացոլում իր կարծիքը՝ անհրաժեշտության դեպքում ավելացնելով լրացուցիչ մեկնաբանություններ:

2.5. Շրջանավարտների հարցումն անանուն է: Սակայն շրջանավարտներին հնարավորություն է տրված ցանկության դեպքում նշել իրենց անուն, ազգանունը:

## 3. Շրջանավարտների հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի առաջատար մասնագետի կողմից:

3.2. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

#### 4. Շրջանավարտների հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Շրջանավարտների հարցման արդյունքները քննարկվում են ամբիոններում, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներում՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

Հավելված 1.

## ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

### ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԾԱՐ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն շարունակաբար ձգտում է վերանայել և բարելավել դասավանդման և ուսումնառության որակը: Սույն հարցման նպատակն է կրթական ծրագիրը վերանայելիս հաշվի առնել շրջանավարտների կարծիքները: Ձեր պատասխանները շատ արժեքավոր և կարևոր են մեզ համար, հարցաշարի լրացումը ձեզանից կպահանջի ընդամենը մի քանի րոպե:

Հարցման ամփոփ տվյալները սահմանված կարգով կդիտարկվեն ամբիոններում և Կենտրոնի համապատասխան կառույցներում՝ ապահովելով հետադարձ կապը շրջանավարտների հետ:

1-12 հարցերին խնդրում ենք արձագանքել՝ նշելով այն պատասխանը, որն առավել ճշգրիտ է արտացոլում Ձեր կարծիքը:

Յուրաքանչյուր հարցից հետո կարող եք անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ մեկնաբանություններ: Մեկնաբանությունները պետք է լինեն կոնստրուկտիվ և հավաստի:

Կրթական ծրագրի (մասնագիտության) անվանումը	
Ուսումնառության տարիները	

Շրջանավարտի ներկայիս աշխատանքի վայրը	
Շրջանավարտի ներկայիս աշխատանքի բնույթը	

<b>1. Կրթական ծրագիրը և ուսուցման մեթոդները թույլ են տալիս ստանալ մասնագիտական գործունեության համար բավարար տեսական գիտելիքներ:</b>				
Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>2. Կրթական ծրագիրը և ուսուցման մեթոդները թույլ են տալիս ստանալ գործնական հմտություններ:</b>				
Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>3. Կրթական ծրագիրը և ուսուցման մեթոդները թույլ են տալիս ձևավորել գործնական խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ:</b>				
Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>4. Կրթական ծրագիրը և ուսուցման մեթոդները թույլ են տալիս ստանալ բավարար կարողություն՝ օգտագործելու համակարգչային տեխնիկան և կիրառական ծրագրերը:</b>				
Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>5. Կրթական ծրագիրը և ուսուցման մեթոդները թույլ են տալիս ստանալ օտար լեզուների բավարար իմացություն, ինչպես նաև դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում:</b>				
Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>6. Կրթական ծրագրի առարկաներն ապահովված էին բավարար մասնագիտական պատրաստվածությամբ դասախոսական կազմով:</b>				

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**7. Ուսանողների գիտելիքների գնահատման համակրագն օբյեկտիվ է եղել:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**8. Պրակտիկան թույլ տվեց կատարելագործել մասնագիտական գիտելիքները և գործնական հմտությունները:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**9. Պրակտիկայի համար ընտրված ձեռնարկության պրոֆիլը համապատասխանում էր մագիստրոսական թեզի թեմային և մասնագիտական ուղղվածությանը:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**10. Ուսումնական լաբորատորիաները/մասնագիտացված լսարանները (համակարգչային) բավարար չափով հագեցված են ժամանակակից տեխնիկական սարքերով:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**11. Կրթական ծրագիրն ապահովված է մասնագիտական գրականությամբ և ուսումնամեթոդական այլ նյութերով:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.

**12. Գիտական ղեկավարի հետ իրականացված գիտահետազոտական աշխատանքը գոհացրել է ինձ:**

Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել
--------------------	-------------	--------------	--------------------------	--------------------------

Լրացուցիչ մեկնաբանություններ.				
<b>13. Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել տվյալ կրթական ծրագրում:</b>				

Ցանկության դեպքում կարող եք նշել Ձեր Անուն, Ազգանունը՝ \_\_\_\_\_

Ամսաթիվ՝ «\_\_\_\_» \_\_\_\_\_ 2014 թ.

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար: